«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Ստեփանյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Խ. Աբովյանի անվան թիվ 84 հ/դ

Երևան 2022

Բովանդակություն

Հետազոտական աշխատանք 2

Ներածություն 3

Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները առարկայի դասավանդման գործընթացում 4

Ինչի՞ մասին ես ուզում սովորել 4

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը 6

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին 8

Եզրակացություն 16

Օգտագործված գրականության ցանկ 17

Հետազոտական աշխատանք

Թեմա- Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները առարկայի դասավանդման գործընթացում

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ի՞նչ է մեթոդներ են կիրառվում անձի և պատասխանատու վարքագծի ձևավորման գործում:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Մարդկությունն այսօր կրում է մի շարք խոր տրանսֆորմացիաներ, որոնք լրիվ փոխում են քաղաքակրթության նկարագիրը, ինչը կապված է շարժուն անցումով ինդուստրիալ հասարակությունից տեղեկատվական հասարակության, որում գիտելիքների ստեղծման ու տարածման գործընթացները դառնում են առանցքային: Այդ գործընթացները մեծ չափով հենված են կրթական համակարգի զարգացման վրա:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Վաղ պատանեկան հասակում սովորողների համար արժեքները դիտարկվում են հուզական, չգիտակցված և հիմնականում մատչելիության մակարդակով: Ցույց է տրվել, որ մասնագիտական դպրոցի սովորողների կողմից արժեքների գիտակցման բնույթը բավականաչափ լավ համընկնում է: Նշված համաձայնեցվածությունն էլ անձի զարգացման հիմքն է, իսկ անձնային և մասնագիտական ինքնորոշման գործընթացը ընդգրկում է ինքնագիտակցման զարգացումը, արժեքային համակարգի ձևավորումը և ապագայի տեսլականը:

Խաչվող հասկացությունները՝

- Ազատ և արդար մտածելակերպ
- Ժամանակ և տարածություն:

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Կրթական միջավայր
2. Մանկավարժություն
3. Հոգեբանություն:

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Ժամանակակից մարդուն այժմ բավարար չեն միայն առարկայական գիտելիքները, նրանց անհրաժեշտ են նաև մետաառարկայական գիտելիքներ և ունակություններ: Մարդը, ով օժտված է իրականացնելու բարդ ըմբռնողական գործողություններ, պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին. «Ի՞նչ եմ ես ուզում», «Ի՞նչ եմ ես կարող», «Ո՞վ եմ ես»: Պատանեկան տարիքում ձևավորվում է որոշակի արժեքային համակարգ, որի հիման վրա ավագ դպրոցի պատանիները սկսում են այս կամ այն չափով գնահատել իրենց կյանքի հեռանկարները: Այդ արժեքային համակարգից է կախված, թե ինչ միջոցներ պետք է ընտրվեն՝ ընդհանուր և մասնավոր նպատակներին հասնելու համար, որոնք ձևավորվում են՝ ըստ նրանց հետագա ուսուցումը բուհում շարունակելու հնարավորության: Ավագ դպրոցում ուսուցման դրդապատճառները պայմանավորված են կյանքի համար սովորողների ուրվագծած ծրագրերով և ինքնորոշման հնարավորություններով: Ավագ դպրոցի 10–12–րդ դասարանների աշակերտների հետ հոգեբանի և մանկավարժի աշխատանքը պետք է հիմնականում ուղղված լինի սովորողի ապագայի ծրագրերի մասնագիտական և անձնային կողմնորոշմանը:

Պատանեկան ինքնորոշումն անձի ձևավորման կարևոր փուլ է, իսկ ինքնորոշման կարևորագույն օղակը կյանքի հեռանկարի ծրագրումն է, որը ենթադրում է կողմնորոշում համամարդկային և մասնագիտական արժեքների համակարգում, իրական նպատակների և դրանց հասնելու ճանապարհների ուրվագծում: Անձնային ինքնակողմնորոշումը սեփական կյանքի ուղին գիտակցաբար և ինքնուրույն ընտրելու գործընթաց է և արդյունք:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները առարկայի դասավանդման գործընթացում:

Հետազոտության առարկան և մեթոդը: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել անձը/ սովորողը, իսկ առարկան՝ անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդների ուսումնասիրությունը առարկայի դասավանդման գործընթացում:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները առարկայի դասավանդման գործընթացում

20–րդ դարի վերջին տասնամյակում և 21–րդ դարի առաջին տասնամյակում Հայաստանում ընթացող խոր բարեփոխումները՝ կապված դեպի շուկայական տնտեսություն և ժողովրդավարություն հասարակության դժվար առաջընթացի հետ, լրջորեն ազդեցին աճող սերնդի դաստիարակության և զարգացման տեսության և պրակտիկայի վրա: Մի կողմից՝ ժողովրդավարական վերաձևավորումները երեխային իրավունք են ընձեռում իր զարգացման ուղին ընտրելու, մյուս կողմից՝ տնտեսական բարեփոխումները հանգեցրին ինքնահիրացման հնարավորությունների սոցիալական, նյութական անհավասարության: Ակնառու դարձավ երեխային օգնելու անհրաժեշտությունը՝ նրան կյանքում իր տեղը որոշելու, ի՞նչ դառնալու, ինչպիսի՞ն լինելու, ինչպե՞ս ապրելու հարցերի պատասխանը տալու հարցում, այսինքն՝ կոնկրետ պատմական պայմաններում անձի զարգացման օրինաչափությունների հիմնախնդիրը դարձավ սոցիալական մանկավարժության առարկան:

Ինչի՞ մասին ես ուզում սովորել

Յուրաքանչյուր մարդ ունի որոշակի վարքագծային հմտություններ: Առօրյա կյանքում այդ հմտությունները կազմում են նրան բնորոշ վարքագծի պատկերը: Վարքագծի մոդելը կախված է ոչ միայն այն հանգամանքից, թե անձն ինչպես է կարողանում իրեն դրսևորել, այլև թե ինչի է ցանկանում հասնել իր վարքով: Այսինքն՝ նրա վարքագծում կա որոշակի դիրքորոշում: Առօրյա կյանքում մարդն առավել հաճախ գործում է իր համար սովորական ձևով: Հայտնվելով իր համար անսովոր իրավիճակում կամ կանգնելով ընտրության անհրաժեշտության առջև՝ նա կարող է միանգամայն անսպասելի քայլ անել: Նման իրավիճակում մեծանում է չկշռադատված որոշումներ կայացնելու հավանականությունը[1]:

Անվիճելի է, որ անձի զարգացումը և ձևավորումը անհատի և հասարակության շահերից բխող միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է մարդկության դարերով ստեղծած մշակութային արժեքների, հոգևոր ժառանգության, գիտելիքների և փորձի զարգացմանը, հարստացմանն ու փոխանցմանը հաջորդ սերունդներին: Այս գործընթացի ապահովումը պայմանավորված է բոլոր սոցիալական ինստիտուտների փոխգործակցությամբ և դրա ռազմավարության մշակմամբ: Դպրոցի՝ որպես սոցիալական ինստիտուտի, կարևոր գործառույթը դպրոցականի անձի զարգացման ապահովումն է՝ ազգային

[1] Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, ՄԻԱՎ/ ՁԻԱՀ–ի կանխարգելում և անվտանգ վարքագծի ձևավորում, Եր., ՁՀԱՀ, 2006, էջ 135-136

մշակութային արժեքների յուրացումից մինչև համամարդկային և համաշխարհային մշակույթ:

Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, պատշաճ վարքի ու վարվելակերպի ձևավորումը: «Կրթության մասին» ՀՀ օրենքում հստակ ձևակերպված է ազգային կրթության բնագավառում տարվող պետական քաղաքականությունը. «1. ՀՀ–ը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետության ամրապնդման կարևորագույն գործոն: 2. Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»[2]:

Ազգային դպրոցում անձի զարգացման հիմնախնդիրն արտացոլված է «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջներում. «Հոդված 11. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, ... նրանց ինքնորոշման ու ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

1) սովորողների աշխարհաճանաչողության ձևավորումը գիտության և կրթության ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան,

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը,

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակն ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը,

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը»:

Դպրոցի պատասխանատվությունն անձի և հետագա սերունդների առաջ ենթադրում է դպրոցականի զարգացումն ու պատրաստումը, նրա մուտքը հանրություն՝ որպես նրա հավասար իրավունքներ ունեցող և լիարժեք անդամ: Դա պահանջում է դպրոցականի հաղորդակցում համամարդկային բարոյամշակութային

[2] Կրթության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 2008 թ. փետրվարի 8–ին:

և հոգևոր արժեքային համակարգին, հանրության կողմից ընդունված վարքի և մտածողության ձևերի որդեգրում:

Ավելի կոնկրետ դա արտահայտվում է մանկավարժական հետևյալ խնդիրների մեջ՝

- դպրոցականների մեջ դրական արժեքային համակարգի ձևավորում,
- դպրոցականի դաստիարակություն բարձր մշակույթով, որը երկրի զարգացման հաջողության կարևոր երաշխիքներից է,
- դպրոցականների մեջ անընդհատ, մշտապես սովորելու դաստիարակություն, որը համապատասխանում է արդի պահանջներին և համակցում է դպրոցականներին հիմնարար գիտելիքներ տալն ու նրանց պրակտիկ գործունեության պատրաստումը որպես նրանց զարգացման գլխավոր պայման:

Այս խնդիրների լուծման ուղղությամբ դպրոցի գործուն մասնակցությունը նրա շրջանավարտին հնարավորություն է տալիս շուկայական հարաբերությունների և ժողովրդավարացման արդի պայմաններում հաջողությամբ իրականացնելու անձի սոցիալականացման գործընթացը, ստեղծելու այնպիսի սոցիալ–մանկավարժական պայմաններ, որոնց առկայությամբ կապահովվի նրա համակողմանի զարգացումը, իհարկե, հաշվի առնելով գիտելիքները, կամքն ու ստեղծագործական ներուժը: Միևնույն ժամանակ այդ խնդիրների լուծումը նշանակում է դպրոցականների սոցիալականացման հատուկ ձևի ստեղծում, որը ենթադրում է անձի մի շարք սոցիալական նշանակության հատկանիշների դաստիարակում: Ազգային դպրոցի հայեցակարգում ընկած է համակարգային մոտեցումը, որի համաձայն՝ այն ամենը, ինչ դասավանդվում է դպրոցում, ենթարկվում է անձի ձևավորման և զարգացման, այսինքն՝ ապագային կողմնորոշվածության խնդրին:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը

Անձի դաստիարակությունը, ուսուցումը, զարգացումը փոխադարձաբար կապված գործընթացներ են, որոնց վրա էապես կարող է ազդել մանկավարժական գործունեությունը: Զարգացումն ու դաստիարակությունը իրենց միասնությամբ կազմում են մարդու ձևավորման էությունը:

Իրենց միասնությամբ դաստիարակությունը, ուսուցումը և զարգացումը կազմում են անձի օնթոգենեզի էությունը և անհատի նպատակասլաց սոցիալականացման արդյունքը: Զարգացումը մարդու օրգանիզմում կատարվող քանակական և որակական փոփոխություններն են: Զարգացման արդյունքը մարդու կայացումն է որպես կենսաբանական տեսակ և սոցիալական էակ: Զարգացման աղբյուրն ու ներքին բովանդակությունը հնի և նորի հակասությունների

առկայությունն է: Անձի ֆիզիկական և հոգեկան զարգացումը ենթարկվում է ընդհանուր օրինաչափությունների:

Խոսելով անձի զարգացման մասին՝ մենք նկատի ունենք մարդու մեջ կատարվող կենսաբանական, հոգեկան և սոցիալական փոփոխությունները, որոնց ընթացքում լուծվում են անձի զարգացման աղբյուրներ հանդիսացող մի շարք հակասություններ, որոնք առկա են.

- ❖ երեխաների պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների,
- ❖ երեխայի հնարավորությունների և հասարակության պահանջների,
- ❖ երեխայի առաջադրած նպատակների և դրանց հասնելու պայմանների միջև:

Այդ հակասությունները դրսևորվում են տարբեր կերպ, մարդու զարգացման տարբեր տարիքային փուլերում: Լ. Ս. Վիգոտսկին առանձնացրել է երեխաների զարգացման երկու մակարդակ.

- ❖ «հրատապ զարգացման մակարդակ»–ն արտացոլում է երեխայի հոգեբանական գործառույթների առկա առանձնահատկությունները, որոնք ձևավորվել են այսօրվա դրությամբ,
- ❖ «մերձավոր զարգացման գոտի», որն արտացոլում է երեխայի նվաճումների հնարավորությունները մեծահասակների համագործակցության պայմաններում[3]:

Այդ գործընթացի վրա ազդում են շրջակա միջավայրը, և ամենից առաջ՝ սոցիալական հարաբերությունների համակարգը, որին մանկուց ներգրավվում է երեխան: Մարդու սոցիալականացման համար էական նշանակություն ունի դաստիարակությունը: Դաստիարակությունը անձի ձևավորման նպատակաուղղված և կազմակերպված գործընթաց է: Քննության առնելով «դաստիարակություն» հասկացության տարբեր մեկնաբանումները՝ կարելի է որոշել այն ընդհանուր հատկանիշները, որոնք առանձնացնում է ուսումնասիրողների մեծամասնությունը.

- ⇒ սանի վրա ներգործությունների նպատակասլացությունը,
- ⇒ այդ ներգործությունների սոցիալական ուղղվածությունը,
- ⇒ պայմանների ստեղծումը երեխայի կողմից հարաբերությունների որոշակի նորմերի յուրացման համար,
- ⇒ մարդու կողմից սոցիալական դերերի համալիրի յուրացումը:

---

[3] Выгодский Л. С., Педагогическая психология/ под ред. В. В. Давыдова, М., АЦТ Астрель Хранитель, 2008, стр. 73

Դաստիարակությունը կարելի է դիտել որպես սոցիալականացման գործընթացի մանկավարժական բաղադրատարր, որը ենթադրում է մարդու զարգացման համար պայմանների ստեղծման նպատակասլաց գործողություններ: Այդ պայմանների ստեղծումն իրականացվում է ուսման, հաղորդակցման, խաղի, պրակտիկ գործունեության մեջ սոցիալական հարաբերությունների տարբեր ձևերում երեխայի ներգրավման միջոցով: Դաստիարակության գործընթացը չի ընդգրկում անձի վրա բոլոր հնարավոր ազդեցությունները, ուրմեն նաև կարող է սոսկ նպաստել երեխայի սոցիալականացմանը:

Դաստիարակությունը քննության է առնում իր օբյեկտը միաժամանակ որպես իր սուբյեկտի: Դա նշանակում է, որ սովորողների վրա նպատակասլաց ազդեցությունը ենթադրում է նրանց ակտիվ դիրքորոշում: Դաստիարակությունը հանդես է գալիս որպես հասարակության մեջ հիմնական հարաբերությունների կարգավորման միջոց. այն պետք է նպաստի մարդու ինքնիրացմանը, նրա կողմից հասարակության սերմանած գաղափարի նվաճմանը:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին

Եթե զարգացումը նպատակամղված է այն հատկանիշներին, որոնք հատուկ են անհատին, ապա դաստիարակությունը ելնում է հասարակական բարոյականության հատկանիշներից, որոնք յուրացնում է անհատը: Այն ասես շրջանակում է զարգացումը, անհատի հատկանիշներին տալիս է սոցիալական ուղղվածություն, ենթադրում ոչ միայն անձի ձևավորում, այլև պայմանների ստեղծում անհատականության զարգացման համար: Զարգացումն ու դաստիարակությունն իրենց միասնությամբ կազմում են անձի օնթոգենեզի էությունը[4]: Մարդու դաստիարակության գլխավոր խնդիրներից մեկը նրա սոցիալական ինքնորոշումն է, որը պայմանավորված է երկու կարևորագույն պայմանի իրականացմամբ: Դրանցից առաջինն իրական սոցիալական հարաբերությունների մեջ երիտասարդների ներգրավվածության ապահովումն է, այսինքն՝ նրանց մեջ գործունեության նկատմամբ անձնային վիճակի առաջացումն է, որը պարունակում է օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրամասեր:

Օբյեկտիվ բաղադրամասը հենց անձի գործունեությունն է, սուբյեկտիվը՝ անձի վերաբերմունքն այդ գործունեությանը: Ընդ որում՝ դրանում է դրսևորվում երեխաների սոցիալական հարաբերությունների առանձնահատկությունն. մի կողմից՝ դրանք համարժեք են մեծահասակների սոցիալական հարաբերություններին, մյուս կողմից՝ կրում են առաջանցիկ բնույթ: Երեխաները, ներգրավվելով իրական

[4] Мардахаев Л. В., Социальная педагогика: Учебник, М., Гардарики, 2005, 269 с

հարաբերությունների մեջ, կողմնորոշվում են այդ հարաբերությունների մասին իրենց իդեալական պատկերացմանը:

Երկրորդ պայմանը երեխաների ինքնահիրացումն է սոցիալական փոխգործակցության գործընթացում: Այդ պայմանը ենթադրում է երեխային շրջապատողների հետ հարաբերություններում իրեն ավելի լրիվ բացահայտելու հնարավորության տրամադրում, երբ կարևոր են նպատակի գիտակցումը և գործունեության նշանակությունները ինքնազարգացման համար, յուրաքանչյուր երեխայի կողմից իր «Ես»–ի գիտակցվածության հաշվառումը, հստակ ու պարզ հեռանկարների (մերձավոր և հեռավոր) առկայություն այն գործունեության մեջ, որում երեխան ներգրավվում է:

Այսպիսով՝ կրթությունը, սոցիալականացումը, դաստիարակությունն ու զարգացումը ներազդում են անձի վրա նույն՝ հասարակության մեջ ամբողջական ինքնահիրացման նպատակով: Ընդ որում՝ զարգացումն ուղղված է անհատին, իսկ դաստիարակությունը, դրանից զատ, ուղղված է նրան, ինչ նա չունի, ինչը տրված է հասարակական բարոյականության մեջ, մարդկանց բարոյական նորմերում և որակներում: Զարգացումը, սոցիալականացումը և դաստիարակությունը կազմում են անձի ձևավորման էությունը: Հետազոտելով անձի զարգացման գործընթացը՝ գիտնականները բացահայտել են մի շարք կարևոր կախվածություններ, որոնք արտահայտում են օրինաչափ զարգացման գործընթացի և նրա արդյունքների ու նրա վրա ազդող պատճառների միջև առկա կապերը[5]:

20–րդ դարի 2–րդ կեսին արևմտյան մանկավարժական գիտության մեջ լայն տարածում գտավ անձի սոցիալականացման տեսությունը, որը հետազոտողների ուշադրությունը շեշտադրում էր մարդու և հասարակության փոխադարձ գործունեության խնդրի ուսումնասիրմանը, սոցիալական ինտերացման, երիտասարդության կողմից ժողովրդավարական արժեքների ընդունման գործընթացների կառավարման կատարելագործմանը, երիտասարդության մեջ գործունեության սոցիալական դրդապատճառների ձևավորմանը: Հստակեցնելով անձի զարգացման ռազմավարությունը՝ մենք կարծում ենք, որ անձի զարգացման ու ձևավորման ուղին պետք է ընթանա տեղեկատվության և լուսավորության, գիտակցության զարգացման, քննադատելու ունակության և հակասությունների հաղթահարման փորձի, ստեղծագործական ակտիվության, սոցիալական, տնտեսական և քաղաքացիական բնագավառներում որոշումների ընդունման ինքնուրույնության ունակության տիրապետման միջոցով:

---

[5] Мардахаев Л. В., Психосоциальные основы реабилитации ребенка: Учеб.пособие, М., Изд–во МГСУ «Союз», 2001, 32 с.

Սոցիալական միջավայրում է միայն ապրում մարդը և այդ միջավայրում հաստատում իր «ես»–ը: Միջավայրը դաստիարակության միջավայրն է, առարկայական–տարածական միջավայրն է, սոցիալ–վարքագծային միջավայրը, իրադարձային միջավայրը և տեղեկութային միջավայրը. նրանց միագումարը գործում է երեխայի բնական միջավայրի ֆոնի վրա:

Եթե միջավայրը աշխարհի և կյանքի պատկերն է ստեղծում՝ շրջապատելով երեխային զարգացման «նյութով», ավելի շուտ սոցիալական զարգացման նախադրյալ է, ապա գործունեությունը անձի զարգացման մարմինն է, զարգացման գործընթացի էությունը, նրա նյութականացված ուղին: Քայլելով քայլել են սովորում, դժվարություններին դիմակայելով՝ քաջություն ձեռք բերում: Զարգացումը՝ միշտ բարոյական, գեղագիտական, քաղաքական, հիգիենիկ, աշխատանքային, մտավոր, հոգեկան, նորագոյացություններ են անձնային մշակույթում, որոնք ծնունդ են առել գործունեության, անհատի նպատակաուղղված ակտիվության ընթացքում՝ ուղղված որևէ օբյեկտի:

«Անձ – միջավայր» կապի բոլոր ուղիների ամբողջությունը վերաբերում է սոցիալական հարաբերությունների և անձի գործունեության բովանդակությանը: Այդ տեսանկյունից ուսումնական գործունեությունը օգնում է յուրաքանչյուր դպրոցականի բացելու աշխարհի և մարդկանց հետ իր հաղորդակցման ուղիները: Երեխայի կողմից սոցիալական որոշակի դերի իրականացումը, մի կողմից՝ պայմանավորված է նախնական անձնային ներուժով, որը բոլորի մոտ տարբեր է, մյուս կողմից՝ արտաքին միջավայրի (ընտանեկան, կրթական, մշակութային) յուրօրինակությամբ: Միևնույն ժամանակ չպետք է անտեսել միջավայրի և ինքն իր հետ երեխայի մարդու փոխգործողությունը (ռեֆլեքսային, ինքնաճանաչում): Այսպիսով՝ առանձին հոգեբանական և մանկավարժական տեսությունների վերլուծությունը ցույց տվեց, որ անձի զարգացման մեջ կարևոր դերը պատկանում է դպրոցին, որը «մեծ» հասարակության մի յուրահատուկ մոդել է, և որի շնորհիվ ձեռք է բերվում սոցիալականացման փորձը, այսինքն՝ ձևավորվում են գիտելիքներ, ունակություններ, հմտություններ, արժեքներ, հարաբերություններ, որոնք անհրաժեշտ են կյանք մտնելու, այնտեղ նպատակներն իրականացնելու համար և սոցիալական այն միջավայրին, որում մեծանում է դպրոցականը:

Յուրաքանչյուր մարդ ունի ներքին պոտենցիալ՝ նախատրամադրվածություն ինչ– որ բանի նկատմամբ: Երբ երեխան ծնվում է, ապա նա անպայման որևէ ուղղորդվածություն է ունենում, և յուրաքանչյուր մարդ պետք է գտնի ու զարգացնի իրեն տրված շնորհը:

Ինքնահիրացումը ոչ միայն կյանքի որոշակի ոլորտում հաջողության հասնելն է, այլև «լրիվ» կյանքով ապրելու հնարավորությունը: Այդ առումով շատ կարևոր գործոն է մասնագիտությունը, որի ընտրությանը պետք է մոտենալ հիմնավոր և արդեն վաղ հասակում պետք է կազմել դպրոցականի զարգացման ուղեգիծը՝ ըստ մասնագիտական ուղղորդվածության: Այդ նպատակով անհրաժեշտ է կատարել սովորողի հոգեբանական վերլուծություն՝ հաշվի առնելով բոլոր մանրամասները և նրբությունները:

Ժամանակակից դպրոցում դժվար է թերագնահատել մոտիվացիայի դերը: Հոգեբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնական գործունեության հաջողությունը կախված է ոչ միայն անձի իմացական ընդունակություններից և հաստատակամությունից, այլև ուսումնական շարժառիթների և նպատակների առանձնահատկություններից, օգտագործվող մեթոդների արդյունավետությունից:

Շարժառիթային փոփոխականները ուսումնական ձեռքբերումների հուսալի կանխատեսումներ են դպրոցում : Ուսուցման գործընթացը բարդ, շարժուն համակարգ է, որն ընդգրկում է ներքին և արտաքին շարժառիթների հիերարխիան, սեփական ներուժի գնահատումը, պատկերացումներն իրենց ձեռքբերումների վերաբերյալ և ուսուցման գործընթացում ծագած դժվարություններին ու անհաջողություններին արձագանքելու եղանակները: Ներքին շարժառիթի ներուժին դիմելն արդյունավետ ուսումնական գործընթացի իրականացման առանցքային ռեսուրս է:

Ինչպես գրում է Պ. Յա. Գալպերինը, «Առաջինը և գլխավորն ուսուցման մեջ իմացական գործունեության կազմակերպումն է, առավելապես սեփական իմացական հետաքրքրությունների ամրապնդումը և զարգացումը: Եվ այդ պահանջում է տարատեսակ շարժառիթների բացառում…»[6]:

Մոտիվացիան համակարգված կրթություն է, որն ապահովում է ուսումնական գործունեության մղումները, ուղղվածությունը և կարգավորումը: Մասնագիտության ընտրությունը վաղ շրջանում սովորողի ապագա գործունեության ոլորտի ճիշտ որոշումն է, որը թույլ կտա նրան գիտակցաբար մոտենալ խնդրին և խուսափել ապագայի անդարձելի սխալներից: Մարդը ներքին բավարարվածություն է զգում միայն այն ժամանակ, երբ զբաղված է իր սիրած գործով: Եվ որպեսզի ընտրեք Ձեզ համապատասխան մասնագիտություն, այդ մասին պետք է մտածեք Ձեր կյանքի արշալույսին:

[6] Степанова М. А., Проблема обучения и развития в трудах Л. С. Выготского и П. Я. Гальперина // Вопросы психологии, 2001, № 4:

Ժամանակակից կրթության զարգացման միտումները ուսուցման գործընթացին ներկայացնում են տեխնոլոգիական և մեթոդական նոր պահանջներ: Որպես այդպիսին առաջ է գալիս ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաների ներդրման պահանջարկ, ինչը ենթադրում է ուսուցման գործընթացի դինամիկ զարգացում, անցում գիտելիքահեն կրթությունից գործնական կարողությունների ձևավորմանը՝ կրթության նկատմամբ կոմպետենտային մոտեցման առաջնայնությամբ: Կոմպետենտային մոտեցումը պահանջում է ուսուցման գործընթացում գիտելիքների մեխանիկական վերարտադրումից անցնել կիրառության, ինքնուրույն տիրապետման, կարևորում անձնական և սոցիալական արդյունավետ գործունեությունը, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունը, ինքնազարգացումը և ինքնիրացումը: Կարող ենք ասել, որ կրթության նպատակը որոշ առումով կոմպետենտությունների ձևավորումն է: Առանցքային է հատկապես հաղորդակցական կոմպետենտությունը, որը ենթադրում է գրավոր կամ բանավոր խոսքի միջոցով հաղորդակցվելու կարողություն, հաղորդակցման նպատակների առաջադրում, իրացման մեխանիզմների մշակում, անհրաժեշտ տեղեկույթի տիրապետում, բովանդակային ճիշտ ընկալում, սեփական տեսանկետը հիմնավորելու, գաղափարները քննադատորեն մեկնաբանելու, երկխոսելու կարողություն:

Ընդգծենք այն փաստը, որ անձնակողմնորոշված ուսուցման տեխնոլոգիայում հենքային են մի շարք սկզբունքներ, որոնք և պայմանավորում են այդ տեխնոլոգիայի օրինաչափությունները և առանձնահատկությունները: Այդ սկզբունքների հաշվառումը հայոց լեզվի և գրականության դասաժամերին մեծապես կնպաստի լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, խոսքի մշակույթի ձևավորմանը, գրագետ, տրամաբանական և շարահյուսական կուռ կառուցվածք ունեցող բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը: Ներկայացնենք այդ սկզբունքները.

· **Ինքնիրացման, ինքնակատարելագործման սկզբունք**, որը ենթադրում է օտար լեզվի ուսուցման գործընթացում սովորողների մտավոր, հաղորդակցական, ստեղծագործական և այլ կարողությունների դրսևորում, արժեքային կողմնորոշումների որոշարկում, ինքնաճանաչման, ինքնադրսևորման գործընթացում օգնել, աջակցել երեխային բացահայտելու և զարգացնելու բնածին ունակությունները, հնարավորությունները, վստահեցնել, որ իր ցանկություններն ու հնարավորություններն օրինաչափորեն փոխպայմանավորված են:

· **Անհատականության սկզբունքի** կարևոր դրույթներից է ոչ միայն սուբյեկտի անհատական առանձնահատկությունների հաշվառումը, այլև դրանց հետագա զարգացումը: Ակնհայտ է, որ ընդհանրապես լեզվի ուսուցումը (կոնկրետ

դեպքում օտար լեզվի) պահանջում է անհատական մոտեցում, քանի որ երեխան ոչ միայն սովորում է բառեր, կազմում նախադասություններ, այլև յուրացնում է կապակցված խոսքը, որը լեզվական միջոցներով սեփական մտքերի արտահայտման անհատական եղանակն է:

· **Ընտրության սկզբունք,** համաձայն որի մարդը, սովորողը պետք է ունենա ընտրության հնարավորություն: Օտար լեզվի դասաժամերին ուսուցիչը պետք է հաշվի առնի սովորողների ներքին մոտիվացիան: Օրինակ՝ սովորողը պեռք է վերլուծի տեքստի իր նախընտրած հատվածը, ընտրի հերոսին, կամ ուսուցիչը տվյալ թեմայի շուրջ շարադրության ոչ թե մեկ վերնագիր պետք է առաջարկի, այլ մի քանիսը, որպեսզի աշակերտը ընտրության հնարավորություն ունենա և այլն:

· **Ստեղծագործականության սկզբունքը** կարևորում է ուսումնական գործունեության կողմնորոշումը դեպի ստեղծագործական կարողությունների ձևավորումը: Անհատական և կոլեկտիվ ստեղծագործական գործունեությունն անձի անհատական առանձնահատկությունների, նրա ստեղծագործական, հաղորդակցային ներուժի բացահայտման կարևոր նախադրյալն է:

· **Մանկավարժական աջակցման** սկզբունքը ենթադրում է մարդասիրական մոտեցում: Յուրաքանչյուր աշակերտ ցանկանում է վստահել ուսուցչին, ակնկալում է նրանից օգնություն, պաշտպանություն: Հավատը սովորողի անձի նկատմամբ, նրա ինքնահաստատման, ինքնիրացման ձգտման խրախուսումը մանկավարժական աջակցման տեսանկյունից երկրորդ պլան են մղում մանկավարժական պահանջը, վերահսկողության ձևերը:

Անհրաժեշտ հոգեբանամանկավարժական պայմանների ստեղծումը նպաստում է ոչ միայն անհատական, այլև կոլեկտիվ աշխատանքի որակական ցուցանիշների բարձրացմանը, իսկ հաղորդակցական կոմպետենտությունը ձևավորվում է միջանձնային փոխհարաբերություններում, համատեղ գործունեության ընթացքում:

Սովորողների հաղորդակցական կոմպետենտության ձևավորման կարևոր նախապայման է սեփական մտքերը գրավոր կամ բանավոր արտահայտելու կարողության ձևավորումը: Այս առումով նպատակահարմար է տրամադրել համապատասխան միջոցներ՝ հաշվի առնելով սովորողների դրդապատճառային ոլորտը, նրանց անհատական առանձնահատկությունները, կողմնորոշումները: Որպես այդպիսին ուսուցիչը կարող է կիրառել որոշ տեքստեր, հետաքրքրաշարժ նյութեր, տրամաբանական, քերականական վարժություններ, կարող է մոդելավորել պրոբլեմային իրավիճակներ, ստեղծագործական առաջադրանքներ, որոնք բովանդակային առումով վերաբերում են օրվա դասին: Անհրաժեշտ է բանավոր

քննարկել, մտքեր փոխանակել, լսել դիմացինի տեսակետը, համաձայնել կամ հակառակվել, որից հետո անցնել գրավոր շարադրմանը: Նմանատիպ աշխատանքները իսկապես նպաստում են սովորողների հաղորդակցական կոմպետենտության ձևավորմանը, խթանում ինքնուրույնությունը և ինքնիրացման ձգտումը:

Կարծում եմ, որ «Անգլերեն լեզու» ուսումնական առարկայի դասավանդման գործընթացում սովորողների հաղորդակցական կոմպետենտության ձևավորման համար նպատակային է նաև համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը: Անվիճելի է, որ մանկավարժական տեխնոլոգիաները նպաստում են գիտելիքների ձեռբերմանը, ինչն անհնար է առանց հաղորդակցման: Կարող ենք ասել, որ մանկավարժական տեխնոլոգիաները, այդ թվում նաև համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, ձեռք են բերում հաղորդակցական գործառույթի նշանակություն: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի հիմնական գաղափարը ուսումնական իրավիճակներում սովորողների համատեղ ակտիվ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է:

Հետազոտողները նշում են, որ «Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճան է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքներն իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Առաջադրանքը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին»[7]:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը օտար լեզվի դասաժամերին կարելի է իրականացնել առաջադրանքների միջոցով հնչյունային, ուղղագրական, բառակազմական, քերականական բնույթի, ինչպես նաև նպատակահարմար է մշակել համատեղ գործունեության նախագծեր, աշխատանք տեքստերի հետ և այլն: Համատեղ աշխատանքները, որոնք նպաստում են ուսուցման գործընթացի սուբյեկտների փոխհարաբերությունների զարգացմանը, խթանում են սովորողների ակտիվ գործունեությունը, որի արդյունքում ձեռք են բերվում ոչ միայն գիտելիքներ, այլև լուծվում են հաղորդակցային որոշ խնդիրներ: Վերցնենք տեքստի հետ աշխատանքը:

[7] Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, Համագործակցային ուսուցում (ձեռնարկ), Եր., «Անտարես», 2006, էջ 29

Ուսուցիչը դասարանում նախօրոք ձևավորում է խմբեր՝ համագործակցային ուսուցման խմբերի կազմման սկզբունքներին համապատասխան: Դրանից հետո նա կարող է առաջարկել փոքր տեքստեր կամ նախատեսված տեքստը բաժանել մասերի, պարբերությունների, որը հանձնարարում է յուրաքանչյուր խմբին: Համագործակցային խմբի նպատակն է յուրացնել, պատմել կամ նկարագրել հերոսներին, համեմատել և այլն: Այնուհետև, աշակերտները պետք է կարողանան պատասխանել տեքստին վերաբերող հարցերին, փոխանակել կարծիքներ, առանց կաշկանդվելու արտահայտել սեփական մտքերը և կատարել ընդհանրացումներ:

Այսպիսով՝ բազմաբնույթ առաջադրանքները, խոսքային հաղորդակցումը նպաստում են սովորողների ինքնաարտահայտմանը, միջանձնային փոխհարաբերությունների զարգացմանը: Ստեղծագործությունների և երկերի ուումնասիրման ժամանակ նպատակային է տեքստին վերաբերող խմբագրական բնույթի որոշակի առաջադրանքների նախապատրաստումը, անավարտ նախադասության մեթոդի կիրառումը, ինչը կարևոր պայման է հաղորդակցման գործընթացում սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորման համար: Արդյունքում ակտիվ շփման միջոցով աշխատում է ողջ դասարանը և միասնական ուժերով լուծում առաջադրված ուսումնական խնդիրը: Տեքստի քննարկման օրինակով կարելի է անդրադառնալ նաև լեզվի բաժիններից բառագիտությանը, ձևաբանությանը, հատկապես՝ խոսքի մասերին, դրանց կազմությանը, առանձնահատկություններին, քերականական կարգերին: Այսպիսով՝ լեզվի դասաժամերին ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների նպատակային կիրառումը ենթադրում է ուսուցման գործունային մոտեցման առաջնայնություն, ընդգծում է դասի գործնական ուղղվածությունը, նպաստում սովորողների քննադատական մտածողության, երկխոսական կարողությունների, հաղորդակցական կոմպետենտության ձևավորմանը:

Եզրակացություն

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ վարքագծի փոփոխման համար անհրաժեշտ առաջին քայլը տեղեկատվության տրամադրումն է, որը կարելի է իրականացնել վերոնշյալ մոտեցումների կամ մո դելների միջոցով: Վարքագծի փոփոխությունը խթանելու համար կարևոր է վարքագծի փոփոխմանը և գործնականում նոր հմտությունների կիրառմանն աջակցող միջավայրի, պայմանների և ծառայությունների ստեղծումը:

Ժամանակակից կրթության զարգացման միտումները ուսուցման գործընթացին ներկայացնում են տեխնոլոգիական և մեթոդական նոր պահանջներ: Որպես այդպիսին առաջ է գալիս ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաների ներդրման պահանջարկ, ինչը ենթադրում է ուսուցման գործընթացի դինամիկ զարգացում, անցում գիտելիքահեն կրթությունից գործնական կարողությունների ձևավորմանը՝ կրթության նկատմամբ կոմպետենտային մոտեցման առաջնայնությամբ:

Կոմպետենտային մոտեցումը պահանջում է ուսուցման գործընթացում գիտելիքների մեխանիկական վերարտադրումից անցնել կիրառության, ինքնուրույն տիրապետման, կարևորում անձնական և սոցիալական արդյունավետ գործունեությունը, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունը, ինքնազարգացումը և ինքնիրացումը: Կարող ենք ասել, որ կրթության նպատակը որոշ առումով կոմպետենտությունների ձևավորումն է: Առանցքային է հատկապես հաղորդակցական կոմպետենտությունը, որը ենթադրում է գրավոր կամ բանավոր խոսքի միջոցով հաղորդակցվելու կարողություն, հաղորդակցման նպատակների առաջադրում, իրացման մեխանիզմների մշակում, անհրաժեշտ տեղեկույթի տիրապետում, բովանդակային ճիշտ ընկալում, սեփական տեսանկետը հիմնավորելու, գաղափարները քննադատորեն մեկնաբանելու, երկխոսելու կարողություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, Համագործակցային ուսուցում (ձեռնարկ), Եր., «Անտարես», 2006, էջ 29
2. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, ՄԻԱՎ/ ՁԻԱՀ–ի կանխարգելում և անվտանգ վարքագծի ձևավորում, Եր., ՁՀԱՀ, 2006, էջ 135-136
3. Կրթության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 2008 թ. փետրվարի 8–ին:
4. Выгодский Л. С., Педагогическая психология/ под ред. В. В. Давыдова, М., АЦТ Астрель Хранитель, 2008, стр. 73
5. Мардахаев Л. В., Психосоциальные основы реабилитации ребенка: Учеб.пособие, М., Изд–во МГСУ «Союз», 2001, 32 с.
6. Мардахаев Л. В., Социальная педагогика: Учебник, М., Гардарики, 2005, 269 с
7. Степанова М. А., Проблема обучения и развития в трудах Л. С. Выготского и П. Я. Гальперина // Вопросы психологии, 2001, № 4: